

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԵԼԻՏԱ ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ

Համեմատության ձևը կիրառության լույսի տակ թեմային է նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր Սեդա Գասպարյանի մեծարժեք հետազոտությունը, որը ռուսերեն լեզվով հրատարակել է Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը: Գիրքը նվիրված է գիտական և գեղարվեստական խոսքում եղած համեմատության երևույթին, նրա դրսևորման ձևերին, ինչպես նաև այդ բնագավառում հումանիտար գիտաճյուղերը ներկայացնող ուսումնասիրություններին, որոնցից մեջբերումները կատարված են անգլերեն լեզվով:

Աշխատանքի ներածության մեջ կա անգլիացի լեզվաբանից կարևոր մեջբերում, որը ոչ միայն վերաբերում է ժամանակակից անգլերենին, այլև բոլոր այն կենդանի լեզուներին, որոնք անցել են գրոց լեզու լինելու երկար ճանապարհը և հասել մեր օրերը. «Խոսակցական անգլերենը վերջին հազարամյակում ենթարկվել է խիստ ուշագրավ փոփոխությունների, փոփոխությունների, որոնք ազդել են լեզվի վրա բոլոր դիտակետերից նրա ձևակազմության, շարահյուսության և բառապաշարի, ինչպես նաև արտասանության: Հին անգլերենը բոլոր տեսանկյուններից այնքան տարբեր է այսօրվա անգլերենից, որ անհասանելի է ժամանակակից անգլիացուն և՛ գրավոր, և՛ վերափոխված բանավոր ձևերով: Ձուների պոեզիան այժմ դժվարություններ է հարուցում և՛ տվագրական, և՛ կարդալու առումով այն ձևով, ինչպես ենթադրվում է արտասանվել է 14-րդ դարում. այժմ այն ունի բավականին նմուշներ, որոնք ժամանակակից լսողության համար ոչ հեշտ վերարտադրելի են: Նույնիսկ Շեքսպիրը, չնայած արտասանությամբ շատ չի հեռացել մեզանից, առաջադրում է իմաստային և՛ շարադասական խնդիրներ» (A. C. Gimson, An introduction to the Pronunciation of English, London, 1966):

Այս մեջբերումը յուրովի զգուշացում պետք է լինի այսօրվա հայ իրականության մեջ բոլոր նրանց համար, ովքեր պնդում են վերադարձը դեպի դասական ուղղագրությունը:

Համեմատության հասկացությունը բանասիրության մեջ եղել և մնում է ելակետային, քանի որ նրա միջոցով ըստ էության ձևավորվել է լեզվաբանությունը որպես գիտաճյուղ: Ս. Գասպարյանը հենվում է պատմահամեմատական մեթոդի վրա, ըստ որի՝ որևէ լեզվի օրինաչափությունները լրիվ հասկանալու համար պետք է իմանալ նույն լեզվաընտանիքին պատկանող մեռած և կենդանի լեզուների բնույթը: Հեղինակը գրում է, թե իրեն հաջողվել է գալ այն եզրակացության, թե անգլերենի տերմիններն ունեն առաջնային նշանակություն այս հետազոտության համար, ինչով որ նրանք առավել հստակորեն արտացոլում են գեղարվեստական գրականության ոչ իրական, մտացածին բնույթը: Գրախոսվող հետազոտությունը լայն շփումներ ունի գրականագիտության այն բաժնի հետ, որն ուսումնասիրում է գրողի լեզուն և ոճը: Համաշխարհային բանասիրության մեջ առանձին գրողների ոճի մասին հսկայածավալ գրականություն է ստեղծվել: Մեզանում, օրինակ, առավել ուսումնասիրված է միջնադարի հանճար Գրիգոր Նարեկացու ոճը:

Սեդա Գասպարյանի այս աշխատությունը ուրույն ձևով նվիրված է բառերի կախարդական աշխարհին: Նրանում առկա է լեզվաբանական մուրբ դիտողականությունը, այդօրինակ լեզվաբանական ուսումնասիրությունների քննությունը, նրանց ընձեռած փաստական և տեսական նյութի ճշգրիտ օգտագործումը: Մեմագրությունը միաժամանակ բացահայտում է այն ճշմարտությունը, թե դեռ որքան բացահայտման կարիք ունի հեղինակի առաջ քաշած հարցադրումը: Նմանօրինակ, երբեմն պարզ թվա-

ցող, երևույթները գիտական համակարգման մեջ դնելու համար անհրաժեշտ են ոչ քիչ ջանքեր և մասնագիտական խոր իմացություն ու վարպետություն:

Գիրքը իր ուղղվածության դիտակետից ներկայացնում է լեզվի աճը, լեզվի ընթացքը, ձևափոխումները, մարդու զարգացման և լեզվի համաժամանակյա փոփոխության ձևային կառույցները: Մենագրությունն ունի նեղ մասնագիտական խորացումներ, որոնք և բացահայտում են նորարարական ուղղվածությունը: Համեմատության երևույթը պատկերված է երկու դիտակետից՝ լսողի և կարդացողի: Սա շատ հետաքրքիր հարցադրում է, և իր մեջ ընդգրկում է օտար լեզուների ուսուցման կարևոր բանալիներ: Նրանցում շեշտված է այն անհրաժեշտությունը, թե ամեն կրթված մարդ պետք է կարողանա կատարյալ խոսել և տիրապետել իր մայրենի լեզվին: Այդ պահանջը գերխնդիր է դառնում բանասիրական բարձրագույն կրթություն ունեցողների համար: Եվ հայտնի նախապայման է այն նաև օտար լեզուն որպես հիմնական մասնագիտություն ընտրած ուսանողության համար, որովհետև օտար լեզուն ուսուցանելու վերջնական նպատակը այն գրագետ ձևով (մայրենի լեզուն ըստ ամենայնի իմացողին համարժեք) տիրապետում է, որին հասնում են դանդաղ, սակայն ջանադիր ու համառ աշխատանքով:

Ս. Գասպարյանն իր գրքում ծանրանում է երկու ձևերի վրա՝ գործնական համեմատության մտավորականի խոսքին պատշաճող և բանաստեղծական համեմատության, որը «եթերային», վերացական ու լորտներում է հաճախ: Աշխատանքը բազմապլան ձևով ներկայացնում է խորացված լեզվաբանությունը, որը սակայն մատուցվում է հստակ ձևակերպումներով: Բանավոր խոսքը անմիջական չփունջ է. գրավորը տարածական հաղորդակցումն է. հեղինակը բարձրացնում է պատասխանատվությունը բանավոր խոսքի նկատմամբ: Չմոռանա՞ք, որ այս պահանջը առավել չափերով եղել է անտիկ աշխարհում, որում և ձևավորվել է հռետորական արվեստ հասկացությունը: Բանավոր խոսքի ներգործում ուժը ժամանակի ընթացքում չի կորցրել իր նշանակությունը և, իրոք, ոճական այնպիսի երևույթ, ինչպիսին համեմատությունն է, նույնքան կարևոր է բանավոր խոսքում: Հեղինակը նկատել է համեմատության երևույթի մասին տարբեր լեզուներով գրվել են զգալի թվով աշխատություններ, սակայն նրանք մեծ մասամբ սահմանափակվում են գեղարվեստական գրականությամբ՝ մի կողմ թողնելով գործող լեզվի այն մասը, որն ընդունված է կոչել «գիտական արձակ»: Այս աշխատանքը նորովի քննում է համեմատության երևույթը գիտական տեղեկատվության ոլորտում: Համեմատության երևույթին նվիրված բազմաքանակ աշխատություններում, համեմայնդեպս, չեն բացատրվում, թե ինչու հեղինակի կողմից բնագիր ներմուծված համեմատությունները հանգեցնում են այս կամ այն ներգործմանը: Այս հետազոտությունը փորձում է լրացնել այդ բացը: Աշխատության մեջ դիտարկված են փոխանվանական և այլաբանական համեմատությունները, որոնք տարբերակված են թե՛ գոյաբանական և թե՛ գործառնական առումով: Հեղինակը տարբերակում է գիտական գրականության մեջ համեմատության երևույթը, որը խիստ զանազանվում է՝ գեղարվեստական մտածողությունից, սակայն հումանիտար գիտաճյուղերը ինչ-որ չափով մոտենում են գեղարվեստական մտածողությանը: Ս. Գասպարյանը տեղին թվարկում է այն գիտնականների անունները, որոնց գիտական հետազոտությունները ինքը յուրացրել է նախքան իր աշխատությունը շարադրելը: Զրանցից են՝ Դեյվիդ Կրիստալ, սըր Էռնեստ Բաուերս, Ալան Գարդիներ, Ուիլյամ Էմպսոն, Պիթեր Ստրենվենս, Օ. Սիմանովա և ուրիշներ:

Երկրորդ քայլը, որ կատարել է հեղինակը, այն ծավալումն է, որը քաղված է նշանավոր անգլիացի հեղինակներից: Հեղինակը իր աշխատության մեջ կոնկրետացրել է դիտարկման գործնական նշանակությունը: Համեմատության գիտական մեկնաբանումը կարող է 100 ժամ տևողությամբ դասընթաց զառնալ և մատուցվել ուսանողությանը: Լեզվաբանության այս բնագավառի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առավել խորացնել գործառնական ոճերի տեսությունը: Աշխատանքում շոշափված հարցադրումները հատկապես կարևոր են լեզվի գործնական ուսուցման տեսակետից: Այդ խնդիրների լուծումը կնպաստի ոչ միայն անգլերենի ամբողջական և խոր տիրապետմանը, այլև գեղարվեստական գրականության ճիշտ ընկալմանը: Աշխատասիրությունը հնարավորություն է տալիս գործնականում տարբերակել փոխառնական և այլաբանական համեմատությունները բանավոր և գրավոր խոսքում:

Մենագրության մեջ բերվում են անգլերեն լեզվով ստեղծված համեմատության գեղարվեստական պատկերներ, որոնցից մեկն է. «... գյուղերից, որոնք նման էին դատարկ բնապատկերում գտնվող նավերի՝ երկար տարածությամբ բաժանված միմյանցից»: Հեղինակը նրբորեն նկատել է, որ համեմատության այս հնարանը ընթերցողին պատկերացում է տալիս ոչ միայն անապատի նման բնապատկերում ցրված գյուղերի մասին, այլև խիստ պատկերավոր ձևով փաստում է մարդկանց օտարվելը միմյանցից: Ուսումնասիրության մեջ տեսանելի է դարձել բառի համեմատության իմաստով ստեղծման երևույթը, երբ այն գեղարվեստական-այլաբանական այլ առարկա է ցույց տալիս և իր հետ կարող է բերել բազմերանգային տարբերակներ: Այս առումով ուշագրավ է Դեյվիդ Լոուրենսի «Ծիածանը» երկից քաղված հատվածը. «Նա գիտեր, որ ինքը կմեռնի ինչպես մի վաղաժամ, անգույն, անհոտ ծաղիկ, որը ձմռան վերջին անգթորեն դուրս է չափվել»:

Հեղինակը դիտել է տալիս նույն բառի համեմատական կիրառություններն ու հնարավորությունները ըստ տարբեր լեզուների՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն: Ս. Գասպարյանը մատնացույց է անում, թե ինչ-

պես երբեմն փոխառությունը հակադրվում է այլաբանությանը և դառնում համեմատության ընկալման չափանիշ: Տեղին է մեջբերվել սըր Էռնեստ Բաուերսից քաղված երկու խոսուհի հատված.

«Վերջերս հայտնագործված այլաբանությունը անշուք բառաբանում փայլում էր ինչպես աղամանդ» և «Գրեթե անհնար է կանգնեցնել լեզվի առաջընթացը. այն նման է Միսիսիպիի ընթացքին»:

Աշխատության երկրորդ գլխում դրվում է քննվող խնդրի գնահատումը ընթերցողի և լսողի կողմից: Բնմարկման հարց է դարձել Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հատուկ սեմինարը՝ նվիրված այդ հարցերին: Գրքում ներկայացվում են սեմինարին մասնակից առանձին լեզվաբանների տեսակետներ, որոնք քննարկվել են սեմինարի ժամանակ, այնուհետև շարադրվում են անգլիացի լեզվաբանների կարծիքներն ու մեկնաբանությունները, գլուխն ավարտվում է մենագրության հեղինակի եզրակացություններով: Գրքի համեմատական օրինակներից ուշագրավ է նաև հետևյալը. «Նա նման էր Լեոնարդո դա Վինչիի նկարած կնոջը, որին մենք սիրում ենք ոչ այնքան իր, այլ իր համր խոսքերի պատճառով»:

Հետազոտողը մատնացույց է անում այն դիպուկ համեմատությունը, որով գրական երկի հեղինակը կամենում է ներկայացնել նկարագրվող հերոսուհու էությունը: Ս. Գասպարյանն անդրադարձել է հոգեզննական համեմատություններին գիտական խոսքում, որոնց նվիրված աշխատանքները վերջին ժամանակներում ավելի քան շատ են: Չնայած գիտական խոսքն ամբողջովին տարբեր է գրական-գեղարվեստական մտածողությունից, բայց նրանում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ գիտական խոսքն էլ սկսում է այլաբանական բնույթ կրել: Հատկապես դա երևում է գրական քննադատության մեջ. երբ հեղինակը երբեմն դուրս է գալիս ակադեմիական արտահայտչաձևերից և մոտենում գրողի մտածելակերպին:

Ահա մի օրինակ. «... ինչ, բոլորից հետո, պատահում է մեզ հետ, երբ մենք կարդում ենք Համլետի ծավալում մենախոսությունները: Մենք տեսնում ենք ցողի նման անէացող մարմիններ...»:

Ս. Գասպարյանի գիրքը հայ դասական մեկնողական ավանդույթների շարունակությունն է: Այդպիսի ավանդույթ ձևավորվել է դեռևս միջնադարում՝ կապված Դիոնիսիոս Թրակացու քերականության հետ: Երևույթի գիտական բնութագրումը կատարել է Նիկողայոս Ադոնցը՝ իր կոթողային աշխատության մեջ:

Ռուսաց լեզվով շարադրված այս հետազոտությունն անշուշտ ենթադրում է շատ լայն ընթերցողական լսարան, սակայն չպետք է մոռանալ ընթերցողական մի այլ շրջանակ, և ցանկալի է այս կարևոր հետազոտության հայերեն տարբերակի հրապարակումը ևս:

1 «Մոնա Լիզա» նկարի մասին ուշագրավ մեկնություններ տե՛ս Walter Pater, *Studies in the History of Renaissance*, New York, 1873, Giorgio Vasari, *The Lives of the Painters, Sculptors and Architects*, New York, 1927, Clifford Bax, *Leonardo Da Vinci*, New York 1932

2 Адоныс Н. Дионисий Фракийский и армянские толкователи, Петербург, 1915.